ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2023 թվականի N 270 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1708-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվեն-ցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման N 2 հավելվածի՝

ա. 4-րդ կետում «հուլիսի 10-ը» բառերը փոխարինել «մայիսի 5-ը» բառերով,

բ. 5-րդ կետում «հուլիսի 15-ը» բառերը փոխարինել «մայիսի 10-ը» բառերով,

գ. 10-րդ կետում «2022 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները ներկայացվում են համապատասխան մարզպետարաններ մինչև 2022 թվականի հուլիսի 17-ը» բառերը փոխարինել «2023 թվականի սուբվենցիայի ամբողջական փաթեթները ներկայացվում են համապատասխան մարզպետարաններ մինչև 2023 թվականի մարտի 6-ը» բառերով,

դ. 11-րդ կետում «նոյեմբերի 30-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 5-ը» բառերով և «2022 թվականին սուբվենցիայի ամբողջական փաթեթները նախարարություն են ներկայացվում մինչև 2022 թվականի հուլիսի 20-ը» բառերը փոխարինել «2023 թվականի սուբվենցիայի ամբողջական փաթեթները նախարարություն են ներկայացվում մինչև 2023 թվականի մարտի 15-ը» բառերով, ինչպես նաև «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով,

ե. 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին և 5.2-րդ ենթակետերով՝

«5.1) Բնակավայրի փողոցների կառուցման և նորոգման դեպքում՝

ա. հատակագծերով սահմանված փողոցների ընդգծված պատկերը,

բ. այդ ճանապարհների սպասարկման ու պահպանման ծախսերը համայնքային բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու վերաբերյալ տեղեկանքը,

գ. այդ ճանապարհների ստորգետնյա ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն և հավաստիացում, որ ծրագրով նախատեսվող շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում չեն նախատեսվում նշված հատվածներում այլ ստորգետնյա ենթակառուցվածքների կառուցման ու վերանորոգման աշխատանքներ.

5.2) ոռոգման համակարգերի կառուցման ու նորոգման դեպքում՝ ծրագրի արդյունքում ակնկալվող ոռոգելի հողատարածքների և դրանց չափերի քարտեզային պատկերը։»,

զ. 14-րդ կետում «5» թիվը փոխարինել «7» թվով,

է. 16-րդ կետում «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով,

ը. 17-րդ կետում «փետրվարի 2-ը» բառերը փոխարինել «փետրվարի 15-ը» բառերով և «2022 թվականին հանձնաժողովի նիստերում սուբվենցիայի հայտերը քննարկվում են մինչև 2022 թվականի օգոստոսի 2-ը» բառերը փոխարինել «2023 թվականին հանձնաժողովի նիստերում սուբվենցիայի հայտերը քննարկվում են մինչև 2023 թվականի մարտի 31-ը։» բառերով.

2) որոշման N 3 հավելվածի «Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա» տողում՝

ա. «ոռոգվող տարածքը՝ հա» բառերից հետո լրացնել «, կցել քարտեզագրված պատկերը» բառերը և «զբոսաշրջային վայրերին հարակից լինելը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև նշել փողոցի(ների) անվանումները, կցել հատակագծերով սահմանված փողոցի(ների) ընդգծված պատկերը և ներկայացնել ստորգետնյա ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվությունը:» բառերը,

բ. «Նախադպրոցական հաստատությունների կառուցման և նորոգման դեպքում՝ նշել» բառերից հետո լրացնել «հաստատության ջեռուցման, ինչպես նաև ամբողջական գույքի ապահովման կամ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

02.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ